



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբերի 2016 թվականի N 30-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 9 նիստի օրակարգը:

1. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 35-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ավագանու անդամներ՝

- | | | |
|--------------------------------|--------|------------|
| Կողմ -3 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
| 1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ <i>grif</i> | | |
| 2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ <i>uace</i> | | |
| 3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ <i>uad</i> | | |



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՂԱՎԱՐ՝

Ա. Մուրադյան

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբերի 2016 թվականի N 31-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Մելիք Կիմի Անդրիասյանի ներկայացրած դիմումը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել սեփականության իրավունքով քաղաքացի Մելիք Կիմի Անդրիասյանին պատկանող Գետամեջ համայնքում գտնվող 4,8 հեկտար ընդհանուր մակերեսով անշարժ գույքը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2803716):
2. Տալ համաձայնություն համայնքի ղեկավար Ավետիս Վարազդատի Մուրադյանին կնքել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր Մելիք Կիմի Անդրիասյանի հետ:

Ավագանու անդամներ՝

Կողմ -3

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ



Handwritten signature in blue ink

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբերի 2016 թվականի N 32-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 35-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի հատված 6-ի՝

ա. 2131 տողի՝ «Պարտադիր վճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «0,0» թիվը փոխարինել «50,0» թվով.

բ. 2131 տողի՝ «Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «223,0» թիվը փոխարինել «273,0» թվով.

գ. 2130 տողի՝ «Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «223,0» թիվը փոխարինել «273,0» թվով.

դ. 2111 տողի՝ «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «100,0» թվով.

ե. 2111 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման

հողվածի 6-րդ սյունակում «19825,7» թիվը փոխարինել «19775,7» թվով և 7-րդ սյունակում «18399,0» թիվը փոխարինել «18349,0» թվով.

զ. 2111 տողի՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» տնտեսագիտական դասակարգման հողվածի 6-րդ սյունակում «19825,7» թիվը փոխարինել «19775,7» թվով և 7-րդ սյունակում «18399,0» թիվը փոխարինել «18349,0» թվով.

է. 2110 տողի՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հողվածի 6-րդ սյունակում «19825,7» թիվը փոխարինել «19775,7» թվով և 7-րդ սյունակում «18399,0» թիվը փոխարինել «18349,0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

Կողմ -3

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ